

ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՑՐԳԻՑ-ԸԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒՔԹԱԹԵՐԹ

№ 29 կիրակի 2 օգոստոսի | երրորդ տարի | 1892

Ամիսը տարեկան բաժանորդագինն է 3—28 կ. իսկ Տարազինը 6 րուբլի. առանձին Ա-ը 25 կ. Տարազին. Тифлисъ. Редакція иллюстр. журн. Агбюръ կամ Таразъ իսկ արտասահմանից՝ Titlis-Caucase, Rédaction des jour. illustrés Agbur կամ Taraz.

Սպառած են ներկայ թուականի «ԱՂԲԻՒՐԻՒ» №№ 1, 2. «ՏԱՐԱԶԻ» №№ 3, 5, 8, 9.

Ա ն դ ր ի ա.—ա ռ ա կ ա ց ո ց ի ր ո ջ ա կ ա յ ք ը.

ՐՕԼԱՆԴ *)

(ՕՍՏՐԱԴՕՐՍԿՈՒՅ)

Երբ արձրացաւ գետնի վրայից Րօլանդը՝ վէրքերով ամբողջապէս ծածկուած, սկսեց Թախառել ընկերների դիակների մէջ՝ չի գտնել արդեօք մէկին կենդանի, որ վերջին օգնութիւնը հասցնէ։ Ընկած են ընկերները անշարժ, կենդանի է միայն արքեպիսկոպոս Տուրպինը։ Ընկած է նա անշարժ, վէրքերով ծածկուած դիակների կայացած բլրակի վրայ, հանդարտ ժպտով պարզուած չըրթունքներով պատրաստւում էր ընդ մէջ թողնել այս աշխարհը։ Բարձրացնում է քնքշութեամբ տանջուղին Րօլանդը, հոգատարութեամբ դնում է կանաչ մարգի վրայ, տալիս է նրան սառը ջուր, պատռում է հագուստի ծայրերը և քնքշութեամբ կապկպում է նրա վէրքերը։

— Մնաս բարեւ, Րօլանդ, ասում է արքեպիսկոպոսը... Ես պատրաստ էի Տիրոջ առաջը յայտնւելու, բայց ուրախ եմ մի բանի մասին, որ վերջին անգամ չեմ կարողանում իմ կայսրի վրայ նայել։

— Բարի ընկեր, ասաց Րօլանդը, ես նոյնպէս շուտով կը թողնեմ այս աշխարհը։ Թուլանում եմ վէրքերից։ Օրհնիր ինձ, արձակիր ինձ Տիրոջ անուամբ՝ իմ բոլոր մեղքերը և նրանցից ամենածանրը իմ անխելք վատահութեան ընկած զոհերի փրանսիացոց մասը։ Օրհնիր նոյնպէս և իմ մեռած ընկերներին։ Ինամեմ դու այլ ևս ոյժ չունես գետնից բարձրանալու. նրանց թանկագին մնացորդներին մօտենալու։ Ես դեռ կարող եմ ուժերս հաւաքել։ Ջեռքերիս վրայ կը բերեմ քեզ մօտիմ սիրելի ընկերներիս դիակները և կը դնեմ նրանց քո առաջ։ Կարդան նրանց վրայ քո վերջին աղօթքը և խաչակնքիր նրանց։

— Բարի մեռք է ծագել քո գլուխս, թոյլ ձայնով խօսեց արքեպիսկոպոսը, ուրախ եմ վերջին անգամը տեսնել իմ քաջերի հետ։ Մեզ ջարդեցին Թշնամիքը, բայց չը նայած դրան՝ կռւի դաշտը մնաց փրանսիացոց վրայ։

Եւ գնաց Թախառելու Րօլանդը դիակներով ծածկւած դաշտով. Դուռ նա Փիրարլեն, գուռ քաջ Գասկոնցուն, գուռ և Գօսլինը, ամենքին հոգատարութեամբ բերում և դնում էր հոգիւոր հօր առաջը։ Իսկ երբ անուանների դիակների մէջ տեսաւ իր ընկեր Օլիվիէի մարմինը, նրա անշարժ, անաչառ երեսը, որ ոչ այնքան առաջ փայլում էր կեանքի ուժով՝ այն ժամանակ դողաց Րօլանդը, ընկաւ նրա կրծքին, պատեց խառաը նրա աչքերը, և ընկաւ գետնի վրայ ուշագնացութեան մէջ։

Տեսաւ այդ ամենը արքեպիսկոպոսը և հասկացաւ ամեն ինչ, մոռացաւ նա իր վէրքերը, իր մահուայ ժամը, կամեցաւ ուշքի բերել ասպետին, վերցրեց մօտն ընկած սաղաւարտը, կամեցաւ ոտի վրայ կանգնել, որ ջուր առնէ մօտիկ աղբիւրից, բայց հոգիս կարողացաւ գրժտութեամբ ծնկները վրայ բարձրանալ, նոյն ժամուն կրկին ընկաւ գետնի վրայ։ Եւ թողեց նրա սուրը, անմահ հոգին նրա Տարմինը։

Ուշքի եկաւ Րօլանդը, մօտեցաւ թոյլ քայլերով մեռած հովին, երկար ժամանակ լուռ կանգնած նայում էր նրա վրայ խորին ակնածութեամբ, յետոյ չոքեց ծնկների վրայ, համբուրեց նրա շրթունքներից և ձեռքով ընդմիշտ փակեց նրա աչերը։ Մաքրեց նրա երեսի և հագուստի արիւնը, կարգի բերեց նրա մերուքը, բարձր Ճակատի վրայ անկարգ թափւած մազերը և խաչաձև ծալեց կրծքի վրայ եպիսկոպոսի Ձեռքերը։

— Մնաս բարեաւ, Տուրպին, հաւատարիմ ընկեր, Դու գնում ես արքայութիւն, մարքուր՝ առանց որևէ նախատինքի կը յայտնւես դու երկնային Նոր դատաստանին, Համեստ և անարատ ես դու և՛ մարդկանց առաջ։ Ամուր կերտով էիր կանգնած դու քրիստոնէութեան համար, շատ վայրենի ցեղեր լուսաւորեցիր ուսմամբ, հեզութեամբ և սիրով յաղթեցիր նրանց կամակորութիւնը և թշնամութիւնը, չէիր սիրում դու ոչ խորամանկութիւն և, ոչ վախկոտութիւն, ատանց վախի էիր կանգնած դու սուրը ձեռքդ արտաւրեան համար, պաշտպանում էիր ուժեղի առաջ թոյլին։ Դու հաստատակամ և մեծահոգի մարդ էիր, գեղի մարդկային ազգը մանկական սիրով լի՝ սիրա ունէիր։ Դու էիր բարի հովիւ և մարգարէ, հոգով ճչմարիտ ապնեւհան և ասպետ։

Այս կերտով էր վերջին անգամը տեսակցում Րօլանդը իր վերջին ընկերի հետ, ինքն էլ էր սպասում իր վերջին րոպէին, զգում էր թէ ինչպիսի արագ քայլերով էր մօտենում իրան մահը։ Մթնեցան նրա աչերը և մեկնեց նա գետնին կիսակենդան, մահամերձ մոռացկոտութեան մէջ։ Իսկ մի ևս ժամանակ նրա մտքին վրայ եկաւ սպասում թշնամին։ Ահռելի հասակով սարացեն դիմամբ մնայել էր միայն ձուլ դաշտում, քել էր արիւն երեսին ու ձեռքերին, պատռել էր գիտին և մեռեալ ձևացել։ Եւ ահա տեսնելով որ հսկան ընկած է ուշագնացութեան մէջ, նա՝ գազանի պէս՝ ցատկեց գետնից, բռնեց Րօլանդից երկու ձեռքով և արագութեամբ դուրս քաշեց պատեանից նրա սուրը։ Բայց այնտեղ ուշքի եկաւ Րօլանդը, բացեց աչքերը և առնելով ձեռքը իր ծանր, մաքուր ոսկուց Ծուլած վզից՝ նրանով ջարդեց թշնամու և սաղաւարտը և գլուխը ազազակելով.—Ինչպէս համարձակւեցար դու, անգործ, մերձենալ Րօլանդին քո պիղծ ձեռքերով։

Եւ ծագեց մեռնողի մարքում սարսափելի միտք։ Երբ ինքն այլևս չի լինիլ՝ նրա սուրը, նրա վերջին ընկերը, որից նա երբէք չէր բաժանւել իր կեանքում, կընկնէր անհատանների ձեռքը։ Սարսափը պատեց Րօլանդին։ Հաւաքեց նա իր վերջին ոյժը, բարձրացաւ ոտների վրայ, և միանգամից գարկեց սրովը մօտակայ ժայռին։ Պողպատը կտաւ քարին, ձայն կանեց, բայց սուրը մնաց անվնաս։

Յուսահատութեան մէջ Րօլանդը կրկնեց նոյնը երկրորդ անգամ, բայց սուրը գարձեալ անվնաս մնաց։ Յան Թողեց գլուխը ասպետը. նայեց սրին և ասաց.

— Ի՞նչու չես լսում ինձ, իմ հաւատարիմ ընկեր, և Ծուռայ... Ահանդ արա ինձ վերջին անգամը, մաս մաս կոտրւիր, դժնդակիր անգին ընծայ Կարլոսի, իմ Թագաւորի, որն իր ձեռքերով կապեց քեզ իմ մէջքիս։ Գեղ հեռ, իմ սուր, մենք հաւաձեցինք Կարլոսի համար նորմանդիան, Բուրգունդիան, Բրետանիան, Լոմբարդիան, Սախսոնիան, Ֆլանդրիան և շատ ուրիշ երկիրներ, մինչ այժմ դու կընկնես կայսրի Թշնամեաց ձեռքը և կը ծառայես նրանց։

Եւ նորից նա գարկեց սուրը ժայռին։ Երկու մասի

*) Տես „Տարազ“ № 28.

բաժանուեց ահռելի հառաչքը այդ հարուածից, իսկ սուրը էլի մնաց անվնաս։

— Ո՞րտեղ թագցնեմ քեզ, բացականչեց ասպետը։ Քո ոսկեայ կոմիում թագցրած են սուրը մատունքի կտորներից, միթէ քո սրբութեան պիտի մերձենան անմաքուր ձեռքեր։

Եւ նա ցանկանում էր կրկին զարկել սուրը ժայռին, բայց ձեռքերը չը բարձրացան, աչքերը մթնութեամբ պատեց, սիրտը դադարեց բաղխելուց, մարմնով անցաւ մահւան ցուրտը և ընկաւ Րօլանդը գետնին։

Եւ մեռնող ասպետի առաջից անցաւ որպէս երազ նրա ամբողջ կեանքը։ Յիշեց նա այն քաղաքները, որ յաղթել էր նա Կարլոսի համար. յիշեց իր ընկեր Օլիվիէրին, հայրենի Ֆրանսիայնէն, ամրոցը, մանկութիւնից իրան ծառայող հաւատարիմ ծառաներին, յիշեց սպիտակամազ ծերուկին իր հայրին և տէրին, որ որդու պէս վարպաքեց և մեծացրեց Րօլանդին իր Թագաւորական ընտանիքի մէջ։ Ահա նա՝ այդ Թագակալ ծերը՝ Թագաւորական աշխատանքներից ազատ ժամին նստացրած նրան՝ վոքր մանկին՝ իր ծնկների վրայ, զբաղեցնում էր հանուքներով, պատմում էր հրաշալի հէքիաթները... Բայց յանկարծ նրա առաջով անցան ուրիշ յիշողութիւնները. յիշեց ասպետը երկնային դատաստանի մասին, որին շուտով պիտի ներկայանար, և մրմնջաց սառչող շրթունքներով.—դու, երկնային Հայր, որ յարութիւն տւիր մեռելների միջից Ղազարոսին, որ պահպանեցիր Դանիէլին Խոր Վիրապում՝ ընդունիր այժմ իմ հոգին...

Համբարձեց ասպետը ձեռքերը դէպի երկինք, յետոյ դրեց կրծքին խաչանձև և հանգաւ խաղաղութեամբ։

Երկնային հրեշտակները Թռան նրա մօտ և ընդունեցին սիրով նրա մաքուր հոգին։

Իսկ Րօլանդի մահւան այդ րոպէում ամբողջ Ֆրանսիան ծածկուեց մութ ամպերով, որոնք բռնեցին և արևի լոյսը։ Մութը պատեց և ամբողջ երկիրը—Պերենէից մինչև Պարիզ և Պարիզից մինչև Ծովը։ Փոթորիկն անցաւ Ֆրանսիացոց երկրով, շարժեցրեց հարիւրամեայ կաղնիները և նրանից շատերը գետնին ընկան, որոտացին ամպերը, վայրեցին հրեղէն լեզուակները, Թափուեց կարկուտը, շարժուեց ելկիրը, իսկ նրա տակից լսելի եղաւ չարագուշակ ձայն։ Դողացին աները, ամրոցները, աշտարակները և նրանցից շատերը գետնին կործտակուեցին, Թափուեց անձրևը ահռելի հեղեղներով՝ փշրելով և տանելով բոլորը, ինչ ճանապարհին էր պատահում։ Լալիս և աղօթում էին մարդիկ, մայրերը որոնում էին մթութեան մէջ իրանց երեխաներին, տիկիններն—ամուսիններին...կարծես պիտի տակն ու վրայ լինէր ամեն ինչ, կարծես հասել էր աշխարհի վախճանը։

Անմխիթար այրիի նման այսպէս էր ողբում Ֆրանսիացոց երկիրը հարազատ Րօլանդի մահը։

III

ԱՍՏՒԾՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Ներս մտաւ Կարլոսը Րօնսիվալիայի ձորը և բացուեց նրա առաջև դիակներով ծածկուած հովիտը։ Սարսափի և սիրութեան մէջ սկսեց նա կանչել Րօլանդին, բայց նրա ձայնը մնաց առանց պատասխանի, սկսեց կանչել Տուրպինին, Օլիվիէրին, Թեոդորին. շատ ասպետների էր կանչում—ոչ ոք չէր պատասխանում։ Լաց եղաւ կայսրը, սկսեց վնասել իր սպիտակ մազերը, և բոլոր Ֆրանսիացիք, որքան որ այնտեղ կային՝ դուքսերից մինչև վերջին աշխատաւորները՝ բարձրացրին մեծ լաց։—Մէկը լալիս էր որդու համար, մեկը եղբօր, երրորդը սպանուած ընկերոջ, չորրորդը բարի տիրոջ... Եւ երկար ժամանակ չէին կարողանում ուշքի գալ Ֆրանսիացիք՝ եթէ նրանց Նեյմսկի դուքսը չը նկատէր հեռուում վախչող Մարսելի զօրքը և չը յիշեցնէր կայսրին վրէժխնդրուելիքն մասին։ Ուշքի եկաւ կայսրը տխրութիւնից Մարսելի անունը լսելուց, սրբեց դողդոջուն ձեռքերով աչքերից արտասուքը, նստեց ձիու վրայ, բարձր ձայնով կանչեց զօրքը և նրա առաջը անցաւ՝ շտապեց Թշնամու ետևից։

Թռչում են Կարլոսի գնդերը քամուց արագ. չատ գնացին նրանք առաջ, բայց էլի չէին կարողանում հասնել անհատներին։ Մայր է մանում է արևը, մութը պատում է սարերը ու հովիտները։ Սարսեց Կարլոսը՝ յիշեց թէ գիշերւայ մթութեան մէջ ազատուի Թշնամին յետամուտից, ցած իջաւ ձիու վրայից և տաք աղօթքով գետնին վռնելով՝ դիմեց դէպի Տէրը.—Մեծ Աստուած, Թոյլ մի տալ որ այդպիսի մի չար գործ կատարուի, մի Թոյլ տալ չարագործներին, և սուրը անէան և խաչիդ Թշնամիներին՝ քո ծառաների արիւնը ներկուելու պիտի ողներին Թագնվիլ գիշերւայ խաւարի մէջ քո սուրը դատաստանից։

Եւ լսեց Կարլոսի ձայնը Փարիսիէ հրեշտակապետը, նրա պահապանը և անտեսանելի և անբաժան ուղեկիցը։ Ասլիացիր, Կարլոս, Աստուած ընդունել է քո աղօթքը և պարգևում է քեզ յաղթութիւն... Գնա առաջ... Քո քաջագործութիւնները մոռցուր են Տիրոջ առաջը, գնա, քո Ճանապարհը չի կորչի գիշերւայ մութը։ Եւ տեղի ունեցաւ հրաշք։ Արդէն վաղուց էր անցել արևի մայր մտնելու ժամը, մոտենում էր կէս գիշերը, իսկ արևը դեռ վայելում էր արևելքում։

Վրահասաւ Թշնամիներին Թագաւորը Սրբոց գետի ափերին։—Նստ արևն Թափուեց, բազմաթիւ անհատները ընկան Ֆրանսիացոց նետերի և սրերի ներքոյ, շատերը յուսահատութիւնից իրանց գցեցին գետի մէջ։ Խորտակեց Աստուած իր բարի ձեռքով Մարսելի ամբողջ զօրքը։

Ցած իջաւ կայսրը ձիուց և չնորհակալութիւն արաւ Աստուածանից չնորհաց յաղթութեան համար։ Եւ անեղևոյթացաւ այն ժամանակ արևը երկնքից և ցած իջաւ երկրի վրայ գիշերւայ մութը։

—Ժամանակ է հանգստանալու, ասաց կայսրը, իսկ առաւօտեան կը գնանք մեր ընկած եղբայրներին Թաղելու։

Եւ բոլորը իջան ձիաներից և կուշից վաստակած՝ իրանց քնի յանձնեցին։

Հանդարտ գիշեր է... Պարզ երկնքում վառ փայլում էին աստղերը. սպիտակ ամպերում լողում է լուսինը՝ արտասալելով գետի մէջ... Բոլորը քնած են... Ը քնեց միայն սպիտակամազ կայսրը... Որպէս իր ամբողջ կեանքում վաղաքշանք չը տեսած մի աղքատ՝ պառկած էր նա մերկ գետնի վր յ՝ առանց հանելու ցած Թոզած գլուխը Թամքի վրայ։ Քունը փախչում է նրա աչերից... Տանջւում է նա իր Րօլանդի համար, իր հաւատարիմ Ֆրանսիացոց համար, որոնք առանց վախի և սրտտունջի դրեցին իրանց գլուխները Ֆրանսիացոց երկրի պատուի համար... Միայն առաւօտեան դէմ քնեց ձե-

ըուկը, բայց երազում չարունակում էր հոսալ արցունքը, ցած Թափուել սաւը քրտինքը ճակատից... Նրան չարունակում էր երևալ արևնով շաղախած, դևակներով պատած Հօնսկայական հովիտը։

Հազիւ էլեն արևի առաջին ճաճանչները երևացել արև ելքում, երբ բարձրացաւ կայսրը և կանչեց զօրքին ընկերներին Թագելու։ Ամենից առաջ մուտք գործեց հովիտը ինքը Կարլոսը և գունաթափ ու դողդոջուն ոտերով սկսեց Թափառել դևակների մէջ՝ որոնելով իր Րօլանդին։ Նա տեսաւ նրան հեռուից, վրայ վազեց դէպի նա և ընկաւ նրա սառը դիակի վրայ։ Վալտեցան ծառաները, շտապեցին դէպի նրանց պետը, բարձրացրին ծերուկին, ուշքի բերին և քնքշաբար նստեցրին կանաչ խոտի վրայ՝ տաբատիկ կաղնիի տակ, Րօլանդի մօտ։

Ցած Թողնելով խպտած Թուր-ցած ձեռքերը նայում է կայսրը դևակի վրայ... Վիշտը կծծոտում է նրա սիրտը, Թափուում է անսպառ կաթիլներով արտասուքը նրա սպիտակ խիտ ունքերի տակից և ասում է շարժելով գլուխը՝ ծեր կայսրը.—Րօլանդ, Րօլանդ... Թող Քաղաքոտեմը ընդունի Տէրը քո ազնիւ հոգին։ Մենակ մնացի ես առանց քո Րօլանդի, ծեր եմ ես և քայքայուած, Ինչ է լինելու իմ պրուիթիւնը առանց քեզ։ Դու էիր ամբողջ Ֆրանսիացոց զօրքը, նրա նեցուկը, նրա պաշտպանը։ Ձիւոն է, ես ունիմ շատ ազգականներ և ընկեր, բայց չկայ ուրիշ Րօլանդ Նրանց մէջ, չկայ և չի լինելու էլ... Քո յաղթութեան փառքով ծածկուած ես կը մտնեմ պատմու, իմ հպատակները, ծեր ճառաները ուրախ-ուրախ կը շրջապատեն ինձ և կը հարցնեն.—իսկ ո՞ւր է Րօլանդը։ Ինչ պիտի պատասխանեմ նրանց։ Կասեմ նրանց չկայ Րօլանդը։ Կը լսեն այդ լուրը սոսկոնացիք, բասւորնացիք, Հռոմէացիք, որոնք սարսում էին քո անունը միայն լսելուց և կը գան ինձ վրայ պատերազմով։—Ո՞վ պիտի առաջնորդէ այն ժամանակ իմ գնդերին, իր հզօր ձայնով ոչ պիտի զարթեցնէ նրանց սրտերում արիութեան հոգին... Չկայ Րօլանդը... Ինչու ես նրանց հետ չէի և չընկայ նրանց հետ միասին... Չկայ Րօլանդը...

Այսպէս ողբում էր ծեր կայսրը և նրա հետ ամբողջ զօրքը։ Երկար ժամանակ նրանք լցնում էին հովիտը անմխիթար հեկեկանքով, բայց ահա մօտ եկաւ Կարլոսին Գողֆրիդ Անժոյսկին և ասաց, Թէ ժամ է Թաղումը սկսելու։—Փողհարները, ասաց նրան կայսրը։

Եւ փողհարեց Գողֆրիդ Անժոյսկին, ընկան ձնկների վրայ բոլոր զինուորները, գետնի վրայ գցեցին վեհապանծ սաղաւարտները։ Եւ սկսեց մեծ լռութիւն։ Զօրքի առաջ անցան քահանաները, եպիսկոպոսները, աբեղաները, վառեցին ննջեցեալների սրբոյ անուշահոտ խունկը, սկսեցին երգել աղօթքներ և խաղաղութեամբ Թաղեցին ընկերների դևակները խոր փոսի մէջ։ Այդպէս Թաղեցին բոլոր զինուորներին, բացի երեք հոգիից՝ Րօլոնդից, Օլիվիէից և արքեպիսկոպոս Տուրպինից։ Հրամայեց կայսրը դնել նրանց առանձին դագաղների մէջ և տանել Ֆրանսիա, որ այդ երեք յաղթողների նշխարքները հանգստանան հայրենի երկրում։

Ասպետները հազիւ էին վերջացրել նրանց ընկերների Թաղումը, երբ կայսրին ներկայացան Սարաբացոց էմիր Բօլիգոնի պատգամաւորները՝ Թագաւորին նորից կռիւ հրաւիրելու։ Այդ էմիրը Մարսելի ընկերն էր և նրա օգնութեան էր գնմել վերաւորած Թագաւորը, որ նա խորտակի Կարլոսին և նրա զօրքը։ Յանձնեց զօրքը Թագաւորն իր կենդանի մնացած օգնականներից ամենախոքերից մէկին՝ դեռ Պետրոս առաքեալի ժամանակից մնացած գրօշակը, իսկ մնացեալ Րօլանդի հպատակած վոզը—և նորից սկսեց կոտորածը։ Նորից լսեցան գաշտերը և հովիտները պատերազմական աղաղակով, նորից սկսեցին հոսալ գետակներով Թէ քրիստոնեաների, Թէ անհաւատների արիւնը և կրկին անգամ խպտած վիշտը Թշնամու զօրքը, և ինքը ամբողջ արևելքում հպատակած էմիրը ընկաւ կայսրի ձեռքից։ Լսեց Սարակոսում այդ սարսափելի լուրը ցաւերից և վէրքերից խպտած նեղացած Մարսելը, լսեց, որ Կարլոսը յաղթութեամբ մտնում է իր մայրաքաղաքը, լսեց և չը կարողանալով տանել այդ բօթաբեր լուրը՝ մեռաւ իր հին ձեռքերի վրայ։

(Կը շարունակուի)

ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ ՍԱՆԴՈՒՂԸ

Վա՛հ, քարնկա՛մ,
Ո՞րտեղից ո՞րտեղ,
Դու ինձնից հասար այդքան
քարտրտութեան։
—Ը՞ս.
Մոդա՛մ, սողա՛մ։

Թարգ. ՀԱՍՕ

խմբագրութիւնից

Ներողութիւն ենք մեր յարգելի այն բաժանորդներին, որոնք պահանջ են ստացել «Աղբիւրի» կամ «Տարազի» №№-ից եւ կամ պրեմիաներից, նեղութիւն չը քաշեն կրկնելու մեզ իրանց պահանջը. քանի որ անկարողացանք իրանց պրեմիաները եւ այն պահանջ №№-ը, որոնք չեն ապահոված, բացի ապահոված «Աղբիւրի № 2-ից, որ երկրորդ տպագրութիւն պիտի անենք եւ բոլոր հրատարակողներին ուղարկենք։

Այժմեան տագնապի պատճառով, քանի որ մեր բաժանորդներից շատերը բացակայ են իրանց բնակած քաղաքներից, անյարմար ենք համարում այժմ ուղարկել պրեմիաները, մանաւանդ որ նրանցից շատերին ուղարկուած է եղել եւ չ հասել մեզ յայտնի եւ անյայտ պատճառներով։

Աւելորդ չենք համարում կրկնել եւ զեկուցանել, որ խրճաղութեանս համար հանգիստ չունենք նշանակութիւն չունի, եթէ մեր բաժանորդների մի քանի տող-

ալ կրկին անգամ՝ առանձայ մեր պրէմիաները եւ №№-ը: Սակայն շատ մեծ ցաւ է մեզ համար, երբ մեր բաժանորդներից մէկը չի առանում՝ իր ժամանակին պրէմիան կամ №№-ը: Եւ տարաբախտաբար պէտք է խոստովանենք, որ այս տարի չքաւորների թիւը նոյնպէս շատ-շատ է, ինչպէս եւ կրկին առաջողների թիւը չափազանց: Սակայն այս բոլորի համար իր ժամանակին:

—

պաշտօնական

Թիֆլիսի թեմի տեսուչ Եղիշէ քահանան մեզ խնդրում է հրատարակել հետեւեալը.

„Այսու յայտնում եմ՝ ի գիտութիւն Վրաստանի եւ Իմերէթի եկեղեցական-ծխական ուսումնարանների պ. պ. տեսչ ուսուցիչներին եւ տեսուչ ուսուցչուհիներին, որ ս. Էջմիածնի Մայր-Աթոռի ուսումնարանական վարչական յանձնաժողովի հրամանագրութեամբ, ի 14-ն մայն յուլիսի № 27, նորից թոյլատրուած է պ. Ղազարոս Աղայեանցի „Ուսումն մայրենի լեզուի“ դասագրքերի կիրառութիւնը մեր ուսումնարաններում:“

—

ժամանակագրութիւն

Թաւրիզից մեզ հաղորդում են, որ խօլերան արդէն չնորհ է տարել այնտեղ: Մեր թղթակիցը, տարաբախտաբար, որոշ տեղեկութիւններ չէ հաղորդում թէ օրական քանի հոգի են հիւանդանում, քանիսը մեռնում և Պարսիկ կառավարութիւնը ինչ միջոցներ է ասել այդ հիւանդութեան դէմ:

—

Փառաւոր ապատակութիւն է, որ անում է խօլերան: Նա ուղի ընկնելով Պարսկաստանի մի ծայրից, Մեչհդից և անցնելով անդրկասպեան հանապարհով Կովկաս, Ռուսաստան, այցելով Եւրոպայի տհմաններըը (Վիէննա), այժմ արշաւանքն ուղղել է դէպի իր հայրենիքի մի այլ ծայրը. Թաւրիզ: Ինչով են պատկաս խօլերը, ժանտախտը գանազան լանկթամուրների, Շահ-Աբասների արշաւանքից: Այդ ժամանակ վայրենիներն աւելի ու վիատակ էին անում այն երկիրներըը, ուր առք էին դնում, այժմ էլ նրանց արժանի ժառանգ ժողովրդի կենցաղն արդունաբերում է ժանտախտ, խօլեր և նոյնպէս աւերում, սպանում իր հարեւան քաղաքակիրթ երկիրներըը:

Բ ո հ և մ՝ ա ց ի

—

Ուրախութեամբ արձանագրում ենք և մենք այն փաստը, որ Պարիզի քաղաքային վարչութիւնը Թիֆլիզի ֆրանսիական հիւպատոսի միջոցաւ հարցնում է մեր քաղաքային վարչութիւնից, թէ նա ինչ միջոցներով կարողացաւ զըսպել խօլերըը, որ մեր քաղաքում նա չը կարողացաւ փուել իր ճիրաններըը:

—

Նիժնի-Նովգորոդից մայրաքաղաքի լրագրներին հաղորդում են, որ չնորհիւ այդ քաղաքի անձնուէր և եռանդուն նահանգապետ Բարանովի, արդէն 500 մահիճ պատրաստ է խօլերային հիւանդների համար: Նահանգապետ Բարանովն իր սեպհական, գեղեցիկ կահաւորուած տունը յատկացրել է նոյնպէս խօլերային հիւանդանոցին:

—

Համարեա քաղաքիս ամեն թաղում թէյատներ են բացւել թէ մասնաւոր անձանց և թէ զտնապան հասարակութիւնների, հասատատութիւնների նախաձեռնութեամբ: Իր պարզ, մաքուր սարք ու կարգով սչքի է ընկնում Կուվիւսմ, Ալեքսանդր-Նեւսկի եկեղեցու դաշնում օրերս բացւած թէյատունը, որ կառավարում են ուսու ընտիլիգենտ աղջկերքը: Մալականները ևս մի թէյատուն են բացել, ուր անհամար յաճախողներ են լինում և որը զարդարւած է ծաղիկներով, դրօշակներով:

—

Մենք դժւարանում ենք հաւատալ, որ Շուշու քահանաները հրաժարւում են խօլերից մեռածներին թաղելու:

Ղարաբաղի հերոս թեմական աւագ-նորդից անչուշտ ս. Էջմիածինը բացատրութիւն կը պահանջէ այս մասին և եթէ ճիշտ է, ըստ արժանոյն կը վարձատրէ քրիստոնէական պարտքը չը կատարող մեր հոգևորականներին:

—

Մենք հաղորդել էինք, որ Կանանց Ընկերութեան վարչութիւնը մտադիր էր վանքի բակում մի ճաշարան բանալու, այժմ ոչ թէ մեր կանայք ճաշարանը բացին, այլև ոչ մի օժանդակութիւն, նպաստ չը տուին թէ քաղաքիս և թէ գաւառների խօլերից հիւանդներին և նրանց ընտանիքներին: Էլ ինչ երեսով մեր կանայք պիտի պահանջեն, որ յոգուտ իրանց ընկերութեան պարեն... Էլ ինչ երեսով նրանք իրաւունք պիտի ունենան պահանջելու, որ հայերը գնեն նրանց ալիդրի տոմսակները, նրանց ուսումնարանների աչակերտուհիների ձեռագործները:

—

Բաղից մեզ գրում են, որ չըջակայ գիւղերից կամաց-կամաց սկսել են վերադառնալ քաղաքի բնակիչները, մինչև անգամ ամարային ժողովարանում պարերեկոյթ էլ են տւել: Բոլորն

աշխատում են ուրախ երևալ։ Բժիշկների թիւն աւելացել է։

Թէև խօլերայի տագնապն անցնում է, սակայն մի ուրիշ տագնապ, որ բագուցու համար հաւասար է այս վայրկենիս համաճարակին՝ դա ֆինանսական ձգնաժամն է։ Համարեա բոլորի գործերն էլ կանգ առած, բոլոր գործերն էլ խճճւած են, ով պէտք է այդ բոլորը կարգի բերէ, ով պէտք է նեցուկ կանգնէ այժմ բագուին։ Ձմռանը է, ֆինանսների նախարարի նախագահութեամբ և անմիջական մասնակցութեամբ այժմ նաւթային գործը քննում են, սակայն ինչ բարերարը հետևանք և երբ պիտի լինի, այդ դեռ յայտնի չէ։ Բայց խօլերան դադարում է քաղաքում, չքերը անցնում և բագուցիք սկսում են վերադառնալ։

—

Վիէննայից մեզ գրում են, որ Մխիթարեան միաբանութիւնը նորերումս աւելի ընդարձակից իր հարուստ սեպարանը գնելով երկու հսկայ արագատիպ մեքենաներ ևս, մէկը Լոգըբուրգ, իսկ միւսը Ըտուգարդ. սրանցից մէկը գոյութիւն ունեցող արագատիպ մամուլներից ամենամեծն է։ Վիէննայում Մխիթարեանների տպարանը կայսերական տպարանից յետոյ աւագինն է համարեւում և այստեղ տպագրւում են մի քանի լեզուներով 10—15 պարբերական հրատարակութիւններ։

—

„Մշակում“ կարդում ենք հետեւեալը.

„Բարեգործական ընկերութեան յուլիսի 22-ի ընդհանուր ժողովում երկու հայ խորհրդագիրներ ամենքին ապշեցրին իրանց խելքով եւ իմաստութեամբ։ Դրանցից մինը, Բրուսայի, այլ եւ Եգիպտոսի պատգամաւոր ա. Աբգար Յովհաննիսեան՝ նախախօսելով ապացուցանում էր, որ „թէյատները եւ ճաշարանները աւելորդ, մօդային քաներ են“, իսկ միւսը՝ ներքում էր դէպինֆէկցիական նշանակութիւնը, եւ առաջարկում, որ Բարեգործական ընկերութիւնը „քիսաչիներ“ պատրաստի եւ ուղարկի գաւառները, հիւանդներին մրգելու... Դրա պատասխան, ժողովում ի հարկէ, եղաւ մի ընդհանուր ծիծաղ։ Երկու հայ խմբագիրների հանճարի եւ խելքի այդ մարգարիտները միւս օրը տեղական ռուս լրագիրների ծաղրի եւ հեգնութեան առարկայ դարձան։ „Եւ այդ տեսակ կարծիքներ յայտնողները լրագիրների խմբագիրներ են“, գրեց ռուսաց լրագիրներից մինը։“

—

դրականութիւն

—

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նոր հրատարակութիւնները.

1. Hugo Pohl (Հիւգօ Պօլ) Բժշկարան. Թարգմանեց գերմաներէնից մի քանի յաւելւածներով բժ. Լեւոն Տիգրանեանց։ Դրքին կից է թարգմանչի բժշկական բառարանը (ռուսերէնից հայերէն)։ Գինն է 2 րուբլի, պարունակում է 694 + 124 երես, միջադիր. Թիֆլիս, Շարադէնի տպարան։

2. Խօլերի մասին, բժ. Մ. Զարգարեանցի, արտատպած 1892 թ. «Արարատ» ամսագրից, որ ձրիաբար է բաժանւում։ Տպւած է Մայր-Աթոռի տպարանում, 18 երես, մեծադիր։

3. Լէօ. Թաթախման գիշերը, 40 երես, փոքրադիր. գինն է 7 կոպ. տպւած է Շուշիի Հայոց Հոգևոր տեսչութեան տպարանում 1892 թ.

4. Թիֆլիզի Հ. Ճրատ. Ընկերութիւնից. Մ՚ըռաս, Շմիդտի, Թարգմ. ռուս. Անուչ. Քալանթար։ Գիրքը պատկերազարդ է, 52 երես, մեծադիր։ Գինը 20 կոպ. է։ Տպւած է Թիֆլիզի, „Արօր“ տպարանում. 1892 թ.

—

Թղթակցութիւն

Կօջօր, 30 յուլիսի.

Այս տարի այստեղ ամարանոց եկողների թիւը անցնում է 9,0000 հոգուց։ Շաբաթ եւ կիրակի գիշերները թռուցիկում պարերեկոյթ է լինում, եւ թէ թռուցիկում ու թէ այգիում ասեղ գցելու տեղ չի լինում, այնքան մեծ բազմութիւն է հաւաքւում։

Այստեղ է եւ Վրաստանի թեմական առաջնորդ Մամբրէ եպիսկոպոսը, շատ ծանր եւ անյոյս հիւանդ։ Ամսոյս 28-ին Կօնսիստորիայի բոլոր անդամները, քարտուղարը, ուրիշ քահանաներ եկել էին այցելութիւն անելու իրանց առաջնորդին։ Բժիշկները բոլորեքեանք, բացի՝ բժ. Խալաթեանից, դադարել են սրբազան Մամբրէ եպիսկոպոսին այցելելու։ Կամենում են հիւանդին տեղափոխել Թիֆլիս, սակայն նա չի համաձայնում։

Անցեալ կիրակի մեր աւանի ծանօթների ընտրութիւնն էր, մեծ բազմութիւն հանդիսականների նոյնպէս ներկայ էր այստեղ, ընտրեցան այժմեան աւանապետ պ. Յովհաննէսեանի կուսակցութեան չըպատկանող անձինք. ձայնաւոր չընտրեց նոյնիսկ ինքը պ. աւանապետը։ Այսօր էլ աւանապետի ընտրութիւնն է, որ ինչպէս նախորդ նամակով յայտնել էի՝ հաւանական միակ ընտրելին համարւում է նախկին պ. Ե. Ղօրդանեան, որի օրով Կօջօրը շատ բարեփոխւել է։

Ճամպռ լինում են այստեղ կօնցերտներ։ Բայց հետաքրքիր էր մեզ համար ամսոյս 28-ին պ. Ն. Շահլամեանի կօնցերտը պանիսատ պ. Դէմոերի մասնակցութեամբ։ Դահլիճը լիքն էր համարեա բացառապէս հայ ունկնդիրներով։ Հրաշալի երգիչը իր հզօր ձայնով մեծ բաւականութիւն պատճառեց հանդիսականներին, մանաւանդ շատ զոհ էին տաղանդաւոր երգչից, որովհետեւ նա գիջանելով հասարակութեան ցանկութեան՝ պրօգրամից դուրս հինգ-վեց հայերէն տաղեր երգեց։ Պ. Շահլամեանին, որ օպէրային երգիչ է եւ կօնցերտների համար շատ հզօր է նրա ձայնը, բարեկամական խորհուրդ կըտայինք շատ հըշտայնել իր այդ զանձը, այլ պահել-պահպանել շատ տարիների համար։ Զուտ ազնիւ հըպէտք է սիրելիր մինել...

Առաջիկայ շաբաթ, կարծեմ, պէտք է լինի Տէր-Նէրսիկ քահանայի խմբի համերգը. մասնակցութեամբ մեր երիտասարդ չութ ակահար պ. Տէր-Ասատուռատուրեանի։ (Այդ կօնցերտը կազմողներից անկախ պատճառներով չկատարւած էր)։

Լինելու է այստեղ եւ երկու ներկայացում հայ լեզուով, մէկը պիտի տայ պ. Պետրոսեանը, իսկ միւսը պ. պ. Քալանթարեան, Տէր-Դաւթեան. երկուսն էլ հայ խմբի թիֆլիսում մնացած անդամների մասնակցութեամբ։ Ցանկալի էր, որ այդ երկու խումբը միանային։

Ի դէպ. այստեղ է այժմ Կ. Պոլսից եկած մի երիտասարդ նկարիչ պ. Ե. Նազարեանց, որ բաւական յաջող նկարում է եւ մատիտով։ Պարոնը, իր ասելով, վաղամերիկ տաղանդաւոր Աղամեանի բարեկամն է եղել եւ իր ասելով, Աղամեանն է պարտք դրել երիտասարդ նկարչի վրայ անպատճառ նովկաս զալ, որովհետեւ այստեղ գիտեն գնահատել եւ հովանաւորել տաղանդներին... (երանի թէ այսպէս լինէր)։

ՕՐ. ՍԻՀԻՆ

—

Նոր-Բայազէդ, 18 յուլիսի

Երբ արդէն խօլերան Ճարակում է ամբողջ Կովկասը և երբ արդէն էպիդեմիան սպառնում է լափել ամբողջ մարդկութիւնը, Նոր-Բայազէդը հազիւ հազ աչքերը արորելով, սկսել է բարեկարգել իր սանիտարական դրութիւնը։ Նոր-Բայազէդը անբարեկարգ է ամեն կողմից.—չունի ոչ քաղաքային հիւանդանոց, ոչ բաղնիքներ, ոչ հասարակաց արտաքնոցներ, ոչ քաղաքային բժիշկ, ոչ այս և ոչ այն... Եւ այժմ, երբ արդէն ամբողջ երկիրը լողում է հիւանդութեան ովկեանոսում և երբ ամբողջ ագգաբնակութիւնը դեգերում է էպիդեմիայի ճիրաններում,—հենց այսպիսի մի ծանր ժամանակում մեր քաղաքի դեկավարները ուզում են մխանգամից ունենալ այդ բոլորը... Այդ շատ լաւ միտք է, եթէ յաջողւի և գա կատարած է քաղաքի նիւթական միջոցներից։ Բայց պէտք է ասել, որ մեր

հասարակութիւնը իր խոր քնից զարթնում է այն ժամանակ միայն, երբ նրա կողքին բզում են թէ՝ ժամանակ է զարթնելու...

Նոր-Բայազէդի ժողովրդի մեծամասնութիւնը այնքան դառնիկ է, որ խօլերա հիւանդութեան ճարակումը կամ որևէ ախտ կոտորածը Աստուծու պատիժ է համարում, և այդ հանգամանքի տեսակէտից այս և այն հիւանդութեան դէմ հնմնաւած կանոնները և նախազգուշացնող միջոցները՝ աւելորդ և անպատշաճ բաներ են համարում... դեղերի գործածումը, բժիշկի այցելութիւնները և այլ այսպիսի պահանջող միջոցները, մեր սրտից հասարակութեան կարծիքով՝ աւելորդ ծախսերի աղբիւրներ են... „թէթէ մահս է, մեռնելու եմ՝ կը մեռնեմ, հազար դեղ ու դարման անեն ոչինչ չի օգնի“. ահա մեր ժողովրդի համոզմունքը...

Ամսիս 15-ին մեր քաղաքային ղեկավարները մի տուն վարձեցին հիւանդանոցի համար, որ գտնւում է քաղաքից դուրս „Դարի-դլուխ“ անուանած քաղաքամասում։ Հիւանդանոցում պէտք է լինին հինգ մահճէ և հինգ բժիշկներ։ Իսկ բժիշկ հրաւիրելու կամ վարձելու մասին ձէն ու ձուն չկայ, որովհետև ունինք միայն մի գաւառական բժիշկ, որով բաւականանում է և ամբողջ քաղաքը։ Գաւառական ասելով պէտք է հասկանալ, ոչ թէ Նոր-Բայազէդի, այլ Վաղաշէնատ և թէ Ալաշկերտ գաւառները չանձնաւած են այդ մինակ բժշկի հոգատարութեանը . . . որը, բացի այն, որ օրը տաս քսան անգամ այցելում է քաղաքիս զանազան մասերն ու բնակարանները, սոխլատած է նաև ձի հեծնել և գնալ այցելելու այլ և այլ գիւղեր ու գաւառներ... Թէ ինչ կը լինի այդ դիպուածներում խեղճ բժշկի դրութիւնը,—դժւար չէ երևակայել...

Որոշած է նաև հասարակութեան համար քաղաքային արտաքնոցներ շինել քաղաքի մի քանի մասերում։ Այդ պէտք էր շուտով ունենալ, որովհետև քաղաքը չունէր մի հատիկ արտաքնոց անգամ, այլ ամեն մի խանութի յետև, ամեն մի վողոցի անկիւն և պատերի տակ ծառայում էին երբև արտաքնոցներ։ Այդ և հարկէ ցանկալի է քաղաքի համար, քանի որ անասելի գարշահոտութիւն կրում են արտագրել։ Նոյն իսկ բնակիչներից շատերը չունին արտաքնոցներ։ Այդ բոլորի հետ միասին՝ եթէ մեր քաղաքի օդն էլ անմաքուր լինէր, այն ժամանակ ամբողջ ազգաբնակութիւնը, որ և է հիւանդութիւն երևալուն պէս՝ պիտի գնար և Թափուէր Սևանի ծովը...

Դ. Ս.

—

տեղատիպան

ՈՒՌՈՒՏ

Արդահան գաւառում գտնւում է հայաբնակ միայն մի գիւղ՝ Ուռուտ, Դէօլային գաւառամասում, քաղաքիս հարաւային կողմը։ Ուռուտ գիւղը դաշտային է։ Կուր գետն ունի. ունի 20 տուն հայ և 4 տուն Թուրք բնակիչներ։ Աւանդութիւն չկայ, Թէ որտեղից են եկած։ Ուռուտի շրջակայքում գտնուած հայերէն յորջորջուած գիւղերից և աւերակ եկեղեցիներից երևում է, որ մի ժամանակ այս կողմերում հայերը շատ բնակած պէտք է լինէին։ Ուռուտի հանդէպը Թրքասբնակ Դատաշէն գիւղում են եղել հայերը, ինչպէս վկայում է մի 120 ամեայ ժիր պառաւ կին, որին, Դատաշէնից Ուռուտ հարս են բերել։

Ուռուտի տները նահապետական են, մի յարկանի, կաւաշէն, երբեմն անտաշ քարից և վայրից շինած, բոլորը հողով ծածկւած. ներքուստ մուխ, խոնաւ, կեղտոտ, ծուռ ու մուռ անցքերով։

Ուռուտի հայերի հողերը, համեմատելով հարևան Թրքերի, յոյների և այլոց հողերի հետ, ոչինչ են։ Առհասարակ, պէտք է ասած, վերջին ռուս Թրքական պատերազմից յետոյ Ռուսաստանի նահանգ երկրի բոլոր հայաբնակ գիւղերի հողերը քիչ են, որովհետև տանկաց ժամանակայ զօրաւոր բէգերը, աղաները, տանձարձակ հարստահարիչ վաշխառուները, որոնց արմատը դեռ չորացած չէ, խլել են անիրաւաբար Թոյլ և անպաշտպան հայ շինականի ձեռքից լինչ լրանց քմաց արժան հն տեսել։

Ուռուտցի հայերը երկրագործութեամբ պարապում են հնաւանդ ձեւով, առաջադիմութիւն չեն սիրում և գաղափար չունին, որ կարելի է նորանոր միջոցներին ձեռք տալ հողից աւելի օգուտներ ստանալու համար. տեսնում ես նոյն վայտաշէն գութանը, նոյն արօրը, գէմը (կալսելու տախտակ), դանդաղաշարժ եզները։ Ձի պահում են բազմացնելու, հեծնելու և ծախելու համար. Թէ ինչպէս մալականը ձիով հերկում է, կարճ ժամանակում շատ գործ է կատարում, ձիուն լծում է փուրգոնին, մի անգամից մեծ քանակութեամբ և շուտափոյթ բեռները է կրում և այլն, զարկ տալով Թէ հողագործութեան և Թէ քաղաքների առևտրին. հայ գիւղացին չի ուզում այդքով տեսնել և հետևել օգտուէ օրինակին։ Հողի նպաստութեան պատճառով, ուռուտցիների նիւթական պաշարը գոյանում է առաւելապէս անասնապահութիւնից (եզ, կով, ձի, ոչխար, այծ), որին նպաստում են խոտատէտ վայրերը։ Ուռուտցին մի շատ սեվիական ձի ունի. ունևորը ոչ առաւել քան 10 ձի, իսկ չքաւորը գոնէ մի ձի. առհասարակ ուռուտցիք հարուստ են համարւում. նրանք բաւական անտեսական հասած կրնեցին 1891 Թուականից նախընթաց երկու երեք տարիներում, երբ շարունակ գարին և ցորենը ցրտահար էին լինում։ Այս գիւղում ոչ մի մարդ արհեստով չի պարապում (աննշան բացառութեամբ). ձմեռ օրերը մեծ մասամբ սրա-նրա օդաներում հաւաքւած գատարկաբանութիւններով են մեռնացնում։ Տպամարդկի Թէ կանայք հագնում են ձիշտ այնպէս, ինչպէս դրացի քրդերը. ոչ մի տարբերութեամբ չի կարելի լրարից որոշել, եթէ ոչ միայն դէմքի ցեղական գծագրութիւնից, այդ էլ դժուար է. այստեղի քուրդը և հայը շատ համանմանութիւն ունին։ Օրը հինգ անգամ «սուիրա նատելու» սովորութիւն ունին, ինչպէս տեղական քրդերը, որոնք առհասարակ շատակեր են համարւում. լրանց առածը վատ է. „բիր քօյնն—բիր օյնն“ (մի ոչխար—մի անգամ)։ Զարմանալի է, որ կանայք օտար հայերի հետ մուծնչ (հասը) և նամիհրամ են մնում, իսկ այլազգիների հետ աւելի ազատ և համարձակ են վարւում։

Ուռուտցիք ուսումնարանի սէր չունին և չունին լրանց միջից կրթութիւն ստացած մի անձնաւորութիւն, որ իր համար բարոյական մի պարտաւորութիւն համարէր խաւարի դէմ մարտնչելու համար։ Նրանք մի ծխականեկեղեցական միգտասեան ուսումնարան հոգալու կարողութիւն ունին, թէև սակաւամարդ են։

Նրանք ընտանեկան և համայնական ընթանում մայրենի լեզուով չեն

զրոյց անում, այլ Թուրքերէն. Երանելով մի քանի տուն բացի Թուրքերէնից՝ ուրիշ լեզու էլ չէ լսանում...

—ՆԱՆ

—

ՓԱՇԱՔԱՆԴ

Նոր-Բայազէդից մի վերստ հեռաւորութեամբ գանւում է „Փաշաքանդ“ գիւղը, որը բաղկացած է 160 տուն հայ-լուսաւորչական բնակիչներից։

Այդ գիւղացիները բացառապէս պարապում են հողագործութեամբ, անասնապահութեամբ և կաթնատնտեսութեամբ։ Հողագործութիւնից արդիւնաբերում են՝ ցորեն, գարի, հաճար, սօրուկ և կտաւհատ։ Վերջին երկու տեսակ ձիթապտուղներից ստացւում է առատ ձէթ, որ Թանգ գին ունի մեզ երկրագործական արտուղներից։

Ինչպէս հողագործութիւնը, այնպէս և կաթնատնտեսութիւնը կատարւում է նահապետական պարզ և հնաոճ սիստեմով և արտադրում է իւղ, պանիր, ժաժիկ, չորթան և այլն, որոնք այնքան էլ հմուտ և մաքուր չեն լինում, բացի մեակ իւղից։ Այդ պարապմունքը հասարակ ձևով կատարելու պատճառով գիւղացիք այնքան արդիւնք չեն ստանում, որքան կարելի է ստանալ կաթնատնտեսականն նոր սիստեմով, այն է գործնականն ձևով կաթնատնտեսելուց։ Խնոցիները գործեալ նոյն նահապետականն կաւէ խնոցիներն են, որոնք շատ քիչ իւղ են արտադրում, իւղային մասնիկները Թողնելով Թանի մէջ։ Պանիրը մակարդումը նոյնպէս նոյնն է մնում, ինչպէս էր սրանից գարերը առաջ։ Այսինքն պանիրը մակարդւում է „դեղ-ջուր“ կոչւած Թթուահամ շաքարաջրով, որը նախապէս պատրաստւած է լինում անիսոնից, կինամոնից, մեխակից, և այլ այսպիսի հոտաւէտ ծաղիկներից, որոնցից անբաժան է լինում նաև անասունների „շնլաւ“ (ստամոքսի կամ աղիքների մի կտոր) անուանած մասը։ Ցանկալի է, որ կաթնատնտեսական գործնական սիստեմը մտցնել այդ պարապմունքում, որով գուցէ կրկնապատիկ աւելի կը շահէին առհասարակ մեր գիւղական կաթնատնտեսները։

Փաշաքեանդը Նոր-Բայազէդի գաւառի գիւղերից առաջինը կարելի է համարել և փայլում է նաև բնական հարստութեամբ։ Բնակիչները աշխատասէր մարդիկ են։ Կան նաև արհեստաւորներ, որոնք պատրաստում են հիւսնուլէներ և այլն արհեստներով։ Գիւղի գեղագրական դիրքը մի հրաշալի զաւակնկար ունի, և ներկայացնում է ամենավայելուչ լանդշաֆտ... գիւղամօտ եղած պարտէզների ծառաստանները, Թեթև զեփիւռի շարժմունքից, իրանց անվերջ սօսափիւնով ամեն րոպէ հովհարում են ամբողջ գիւղը, իսկ գիւղին կից գտնւած սարը, իբրև ջրերի բնական աւազան բիւրեղամման յստակ ջուր է մատակարարում Թէ գիւղացիներին գործածութեան և Թէ մի քանի ջրաղացներին։ Իբրև մի հրաշալի ջրամբար, այդ սարը մի Թանկագին գանձ է այդ գիւղի համար, որի կողքից մի քանի առուներով և ականակիտ աղբիւրներով, կարկաչաձայն խոխոջումով ջուրս են ցայտում սառնորակ ջրեր...

Սակայն այդպիսի մի հարուստ գիւղ, որ Փաշաքեանդն է, չունի ուսումնարան, որի չկնքը, որքան խմացանք, վաղուց կառուցւած և փակած մնում է։ Բայց, որքան լսում ենք, Նոր-Բայազէդի տեղական գործակալ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը յորդորում է այդ գիւղացիներին Թէ անհրաժեշտ է ունենալ մի եկեղեցական-ծխական ուսումնարան։

Գ. Մ.

—

Սուրիանդակ

—

Թիֆլիս. Ի՛ս. Արդ. Ուրախութեամբ կրկնատարենք եւ մեր խնդիրքը. առաջիկայ շաբաթ մեր հաղորդած հասցեով Ֆուլիա կուղարկենը Սալմաստը Հալիւան եւ Ղալատար գիւղերի համար երկու շարժական ատաղձ։

Էջմիածին. Մ. Փ. Ծննդրում ենք ուղարկէք մինչեւ օգոստոսի վերջերը քոլոր միաբանութեան լուսանկարները. նոյնպէս մեր վերջին հանած տեսարաններից մի-մի օրինակ։

Ղուշի. Գ. Ա. Պետերբուրգից մեր ստացած հեռագիրն է. „Դրսական դեկուդոմն արւած է, կասկածելու տեղիք չկայ. սպասեցէք պարմանաբեր հեռագրիս, պատրաստ եցէք վայելուչ դիմաւորելու։“

Դիլիջան. Ն. Ֆ.-Ա. Տալերուն մի սպասէք. աշնան համար էր այդ խոստմանութիւնը։

Էջմիածին. Տ. ս. Բ. Չը գիտենք ինչպէս կրթայ ծեզ, որ մի Թերթի բաժանորդ գրւին եւ 7 ամիս ստանալուց յետոյ մի մասն ուղարկեն եւ միւս մասն էլ խոստանան ինձերորդ ամսում վճարել...։ Բայց գիտէք քանի քանի բաժանորդներ էլ կան, որ քսանում են եւ սկի ոչինչ էլ չեն վճարում։

Ղուշի-Բագու. Գ. Ա. Չեր 116 բաժից մէկը միւսին տակաւոր հեռագիրն ստացանք եւ պարտք համարեցինք հեռագրով էլ ձեզ պատասխանել, որ մեր Թերթերում տպւած յօդւածների համար պատասխանատուն մենք ենք։ Զարմանում ենք, որ դու վատութիւն ունին բազմերնները մղաղրել մամուլը. բազմերնների տգիտութեան, վնասմանը, եսասիրութեան մի շարք ապացուցած վատութեր երեսան հանելուն համար։

Թիֆլիս. Յ. Լ. Սիրալ է ձեր հասկացածը. ընդհակառակը բժիշկները խստիւ արգելում են մանաւանդ այս հարմարագրակի ժամանակ ոչ միայն ոգելից ըմպելիք չափազանց գործածել, այլ եւ միանգամայն պատիրում են նրանց, որոնք սովորութիւն չեն ունեցել խմելու, այժմ նոյնպէս բոլորովին չըխմեն. իսկ նրանք, որոնք խմում են եղել, այժմ չափաւորին։ Դրականապէս յայտնում ենք բժիշկների խորհուրդներից, որ հնարաւոր է ոգելից ըմպելիք խմել, հնարաւոր է խմել եւ գարեջուր հնարաւոր է խմել. նամանաւանդ արբեր ոգելից ըմպելից խմիչքներն օգտակար են եւ գործ են ածւում իբրեւ դեղ-գարման տիւանդութեան ժամանակ։

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ղուաջին մասնաւոր հիւանդանոց

ԲԺՇԿԱՊ. Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վլօրոնցովի արձանի դիմաց)

Հիւանդներին ընդունում են ամենայն օր, բացի կիրակի օրերից

ԱՒԱՒԻՕՑՆԵՐԸ

Բ. Ա. Նահատարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան (եւ ատամնացաւի) սիֆիլիսի եւ աչքացաւի։

Դ. Գ. Բուդկովսկի—10—11 ժ. ներքին, ութեւոցոց եւ կանանց ց.

Կին-բժիշկ Մ. Ա. Իսահակեանց—11½—12 ժ. կանանց եւ երեխայոց ց.

Մ. Զ. Քամալեան—12—12½ ժ. կանանց ց. եւ մանկաբարձութեան.

Ռ. Փ. Պիոտուսկիչ—12—1 ժ. ականջի կոկորդի եւ քթի ց.

Ա. Պ. Կապուպետեանց—12½—1 ժ. ներքին եւ երեխայոց ց.

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ա. Բ. Ալեքսէյեվ—5—6 ժ. նեարդային ց. եւ ելեկտրաբուժութեան։

Ա. Մ. Փուլենեան—5—6 ժ. երեխայոց եւ ներքին ց.

Բ. Ա. Նահատարդեան—6—7 ժ.

Ա. Ա. Գաղամեան—6—7 ժ. հաշի ցաւերի, սիֆիլիսի եւ վիրաբուժութեան.

Վճար—50 կ. Համախորհրդի [կոնսիլիումի] համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ

(ա. ա.) Բ. Նահատարդեան։

ՏՊԱՐԱՆ „ԱՐՈՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆՑ. Дов. Ценз. Тифлисъ, 31-го іюля 1892 г. Тип. Ароръ. Т. Я. Назарьянъ, Барят. ул.